ԶԳՈՒՇԱՑՈՒՄ
28.12.2023
Զգուշացում IOE AI, ChargeFast, CharlesSchwab, Asos Mall, Furious, Hewlett-Packard Company ներդրումային ընկերությունների վերաբերյալ

Կենտրոնական բանկի իրականացրած ուսումնասիրությունից պարզվել, որ Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ***IOE AI***, ***ChargeFast, CharlesSchwab, Asos Mall, Furious, Hewlett-Packard Company*** ընկերություններն իրենց կողմից բացված կայքէջերի, հավելվածների և տելեգրամյան ալիքների միջոցով հրապարակային եղանակով ներգրավում են դրամական միջոցներ՝ հանդես գալով տրամադրված դրամական միջոցների (այդ թվում ավանդների) դիմաց բոնուսներ և այլ անձանց հրավիրելու միջոցով բոնուսներ ստանալու հրապարակային առաջարկով:

Ելնելով այն հանգամանքից, որ նշված ընկերությունները, ըստ էության, հանրության լայն շրջանակից ներգրավում են դրամական միջոցներ, տեղեկացնում ենք, որ ***ՀՀ կենտրոնական բանկի կողմից նշված ընկերություններին չի տրամադրվել որևէ տեսակի գործունեություն իրականացնելու լիցենզիա, հետևաբար՝ վերջիններս գործում են ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության շրջանակից դուրս:***

Հաշվի առնելով վերը նշվածը, Կենտրոնական բանկը չի կարող վերահսկել նմանատիպ ընկերությունների գործունեությունից բխող ռիսկերը և ապահովել սպառողների շահերի պատշաճ պաշտպանությունը, ինչը նշանակում է, որ քաղաքացիները նման կազմակերպություններին իրենց միջոցները վստահելիս գործում են բացառապես սեփական ռիսկով, որը կարող է հանգեցնել ֆինանսական վնասների և ծանր սոցիալական հետևանքների:

Զեղծարարություններից և ֆինանսական կորուստներից խուսափելու նպատակով հորդորում ենք զգոն լինել և օգտվել միայն տեղեկատվության պաշտոնական աղբյուրներից՝ այցելելով ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայք՝ www.cba.am, որտեղ կարող եք ծանոթանալ ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված և վերահսկվող այն ֆինանսական կազմակերպությունների ցանկին, որոնք ՀՀ տարածքում իրավունք ունեն հանդես գալ հրապարակային առաջարկներով և զբաղվել օրենսդրությամբ թույլատրված գործունեությամբ:

Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:
ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն
հեռ. (010) 592592-0702
էլ-փոստ. mcba@cba.am
www.cba.am